

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԳՍՅԱՆ

ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ «ԱՅՐԱՐԱՏ. ԲՆԱՇԽԱՐՀ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ»
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ, ԱՐԱԳԱԾՈՏՆ ԳԱՎԱՌԸ ԵՎ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅԻՆ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v1i64.92

ԱՄՓՈՓՈՒՄ

«Այրարատ. բնաշխարհի Հայաստանեայց» երկը Ղևոնդ Ալիշանի ծրագրած մեծ աշխատանքի գլուխգործոցներից է: Հայր Ալիշանն իր առջև նպատակ էր դրել պատմաաշխարհագրական քննության ենթարկել Պատմական Հայաստանի բոլոր 15 նահանգների մասին տեղեկությունները, գրել աշխատություններ՝ ներկայացնելով դրանք առանձին 20-22 մեծադիր հատորներում: <<Թեպետ երբեք չի եղել Հայաստանում, սակայն իր երկերում ամենատես աչքով ներկայացնում է Մեծ Հայքի գլխավոր նահանգները, ինչպես նաև Կիլիկյան Հայաստանը: Ապշեցուցիչ են պատմական բնակավայրերի նրա ճշգրիտ նկարագրերը>> (Դուլիսանյան Ա., 2020): 1855 թ. լույս տեսած <<Տեղագիր Հայոց Մեծաց>> աշխատության մեջ նա ներկայացրել է պատմական Հայաստանի գավառները, ըստ էության տվել նրանց պատմաաշխարհագրական բնութագրի համապատկերը: 1881 թ. ընթերցողի սեղանին էր դրվել Այրարատ նահանգի գավառներից մեկին՝ Շիրակին նվիրված աշխատությունը, 1885-ին՝ Կիլիկյան Հայաստանին նվիրված «Սիսուանը»: «Այրարատ»-ը տպագրվել է 1890 թ. Վենետիկում՝ Սուրբ Ղազարի հրատարակչությունում: 1893-ին էլ լույս է տեսել Սյունիք աշխարհը ներկայացնող <<Սիսական>>-ը: <<Ալիշանի հայագիտական-բանասիրական աշխատությունները, որոնք մի-մի անկրկնելի էջեր են նրա գիտական կյանքում, չնայած իրենց շուրջ հարյուր հիսուն տարվա հնամենիությանը, առաջ քաշած հարցադրումների, պարունակած գրական-բանասիրական նորությունների, հայագիտական այս կամ այն երևույթին տրված գնահատության տեսակետից շարունակում են պիտանի ու

արդիական լինել անգամ այսօր>> (Շտիկյան Ս., 1981): Ղևոնդ Ալիշանի «Այրարատ. բնաշխարհի Հայաստանեայց» աշխատությունը ներկայացրել է պատմական Հայաստանի Այրարատ նահանգի բոլոր գավառների, քաղաքների, ավանների ու գյուղերի պատմաշխարհագրական նկարագիրը՝ օգտվելով բազմապիսի աղբյուրներից: Դրանց մեջ խոստում տեղ է զբաղեցնում պատմահայր Մովսես Խորենացին, մասնավորաբար նրա «Հայոց պատմություն» աշխատությունը, որին տարբեր հարցերի պարզաբանման ժամանակ դիմել է հեղինակը: <<...<Այրարատ>> ոչ միայն կհավասարվի <<Սիսուանին>>, այլ կգերազանցի նորա թե՛ սովորությամբ և թե, մանավանդ, բովանդակությամբ. որովհետև այս ԲՈՒՆ հայոց աշխարհին է, լի այնպիսի հայրենի հիշատակներով և հիշատակարաններով, որք ավելի մոտ են ազգի սրտին և որոց նմանը սակավ կգտնվի Կիլիկիա...>> (Խալաթյան Գ., 1888):

Սույն հոդվածում քննել ենք «Այրարատ. բնաշխարհի Հայաստանեայց» երկը: Մեր խնդիրն է՝ ներկայացնել Պատմահայր Մովսես Խորենացուն նշված աշխատության մեջ, Ալիշանի կատարած ընդգրկուն հետազոտությունից զատել Այրարատ նահանգի տարածքով ամենամեծ գավառին՝ Արագածոտնին, հատկապես այն տեղավայրերին վերաբերող տեղեկությունները, որոնք այսօր էլ վարչատարածքային բաժանմամբ Արագածոտնի մարզի կազմում են, և ցույց տալ, թե որքանով է Խորենացու թողած ժառանգությունը նպաստել 19-րդ դ. անխոնջ հայագետի հիշյալ երկի շարադրմանը:

Բանալի բառեր և արտահայտություններ. Մովսես Խորենացի, Ղևոնդ Ալիշան, Այրարատ նահանգ, Արագածոտն գավառ, աղբյուրներ, մայրաքաղաքներ, պատմություն, աշխարհագրություն:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ծնվելով Կոստանդնուպոլսում, 12 տարեկանից տեղափոխվելով Իտալիա՝ Ս. Ղազար կղզի, և ամբողջ կյանքում գեթ մեկ անգամ չլինելով բուն Հայաստանի տարածքում՝ 19-րդ դարի հայ մտավորականության խոշորագույն դեմքերից մեկը՝ Ղևոնդ Ալիշանը, իր պատմական հայրենիքի համար և նրա մասին թողեց այնպիսի զրական ժառանգություն, որն անգերազանցելի է իր ծավալների, խորքային

գիտականության, թեմատիկ բազմազանության ու գեղարվեստական արժեքի առումով: Նահապետ անունով հանրահռչակված բանաստեղծը, որ հենց կենդանության օրոք պիտի ճանաչվեր հայ բանաստեղծության ռոմանտիկական ուղղության ռահվիրան, աշխարհաբար պոեզիայի հիմնադիրը, հավասարապես իր ժամանակաշրջանի կարապետն էր հայագիտության ասպարեզում:

Արագածոտնի մարզն ունի պատմամշակութային ժառանգություն, որի մասին Ղևոնդ Ալիշանը մանրամասն ներկայացրել է իր «Այրարատ. բնաշխարհի Հայաստանեայց» երկում: Մինչև տպագրությունը այն արդեն իսկ գիտական շրջանակներում արժանացել էր մեծ գնահատանքի:

Երկի առաջաբանում Ալիշանը ներկայացնում է Այրարատ նահանգի մասին գրելու դրդապատճառների, նպատակի մասին, ասում է, որ այն սոսկ աշխարհագրական երկասիրություն չէ, այլ ներկայացված են Այրարատի բնաշխարհը, շրջանները, գյուղերն ու տարածաշրջանի եկեղեցիները: Հեղինակը, ինչպես Մովսես Խորենացին «Հայոց պատմություն» աշխատության մեջ, առաջնահերթ նշում է այն հիմնական աղբյուրները, որոնցից օգտվել է, իսկ 590-էջանոց սովաբաժավալ ուսումնասիրության մեջ արձարծված յուրաքանչյուր տեղեկությունից առաջ, հետո կամ էլ տողատակերում հիմնականում նշում է այն հեղինակի անունը, որից օգտվել է:

Ալիշանն օգտվել է երեք հիմնաղբյուրներից 1. Հայ հեղինակներ, 2. Հայաստանում եղած եվրոպացի գիտնականների ճանապարհորդական հուշեր ու տեղագրություններ, 3. Ազգասեր և բարեսեր հայ գործիչներ, որոնք կամ իր խնդրանքով, կամ էլ ինքնահոծար բազմապիսի նյութեր են տրամադրել: Առաջինի դեպքում հիմնական մեջբերվող անուններն են 5-րդ դարի մատենագիրները՝ Եզնիկ Կողբացի, Կորյուն, Ագաթանգեղոս, Փավստոս Բուզանդ, Մովսես Խորենացի, Եղիշե, Ղազար Փարպեցի, մյուս դարերի պատմիչներից՝ Մեբեոս, Մովսես Կաղանկատվացի, Արիստակես Լաստիվերցի, Թովմա Արծրունի, Ստեփանոս Օրբելյան, Մխիթարյաններից, օրինակ, Ղուկաս Ինճիճյան: Երկրորդ աղբյուրը կազմում են տարբեր ազգերի՝ հույն, պարսիկ, արաբ, գերմանացի, ֆրանսիացի ու անգլիացի պատմիչների, հետազոտողների ու պարզապես ճանապարհորդներից

քաղաքերված նյութերը: Շատերը զարմանում են, թե ինչպե՛ս է Ղ. Ալիշանը, երբեք չլինելով բուն Հայաստանում, կարողացել այդքան խորությամբ, մանրամասներով տալ նրա ամբողջական պատկերը: Մխիթարյան միաբանության գրադարանն ունի հարուստ հավաքածու, բացի դա՝ եվրոպական առաջնակարգ գրադարաններ ու թանգարաններ այցելելիս Ալիշանը առիթը բաց չէր թողնում իրեն հետաքրքրող թեմաների մասին նմուշների գոնե պատճեններն ամեն գնով ունենալ: Բայց դա բավ չէր. Հայաստանի մասին գրելիս ձեռքի տակ պետք էր ունենալ հենց Հայաստանից ստացված նյութեր: Այդ առումով ընդգծենք, որ Ղևոնդ Ալիշանն ու ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանը մեր գրականության այն բացառիկ անհատականություններն են եղել, որ ունեցել են իրենց, այսպես կոչված, «թղթակիցները», որոնք տարբեր ոլորտներում գործող, տարբեր մասնագիտություններ ունեցող, Հայաստանի տարբեր շրջաններում երբևէ եղած մարդիկ էին, որոնք, երկու մեծ հետազոտողների հետաքրքրությունների շրջանակում տրամադրել են նրանց զանազան տեղեկություններ ու աղբյուրներ: Այս խումբն էլ կազմում է Ալիշանի «Այրարատ» աշխատության երրորդ աղբյուրագիտական հենքը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ղևոնդ Ալիշանի ուսումնասիրությունները թեմատիկ առումով լայն ընդգրկվածություն ունեն: Դրանք հավասարապես պատմական, աշխարհագրական, բանասիրական, հնագիտական, աղբյուրագիտական արժեք ունեն: Ըստ այդմ՝ հետազոտությունը կատարվել է պատմահամեմատական, համադրական-վերլուծական և զուգադրական մեթոդներով:

ՔՆՆԱԼԿՈՒՄ

Մովսես Խորենացու <<Հայոց պատմության>> մեջ <<Արարադ>> տեղանունը հանդիպում ենք Հայկի ապստամբության մասին գլխում. <<Որում ոչ կամեցեալ հնազանդ լինել Հայկայ, յետ ծնանելոյ զորդի իւր զԱրամանեակ ի Բաբելոնի՝ չու արարեալ գնայ յերկիրն Արարադայ, որ է ի կողմանս հիւսիսոյ, հանդերձ որդուլք իւրուլք և դստերօք և որդւոց որդուլք, արամբք զօրաւորօք, թուու իբրև երեքհարիւր, և այլուլք ընդոծնօք և եկօք յարեցելուլք ի նա և բոլոր աղխիւ>>:

(Մովսես Խորենացի, 1990): <<Ապա զօրածոդով լինի ի վերայ նորա Տիտանեանն Բէլ ամբոխիւ հետևակ զօրաց. գայ հասանէ ի հիւսիսի, յերկիրն Արարադայ, մերձ ի տունն Կադմեայ>> (Մովսես Խորենացի, 1990): Երկի աշխարհաբար թարգմանության ծանոթագրություններում, սակայն, ակադեմիկոս Ստ. Մալխասյանցը այս <<Արարադայ յերկիր>>-ը մեկնաբանում է այսպես. <<Արարադի երկիրը Արարատյան նահանգը չէ, Հայաստանի կենտրոնում, այլ նրանից արևմտահարավ ընկած երկիրը, Վանա լճից հարավ>> (Մովսես Խորենացի, 1990):

<<Այրարատ>> է կոչում Մովսես Խորենացին այն դաշտը, որտեղ Շամիրամի գորքի դեմ պատերազմելիս ընկավ Արան: <<Գայ հասանէ տագնապաւ (Շամիրամը) ի դաշտն Արայի, որ և յանուն նորա անուանեալ Այրարատ>> (Մովսես Խորենացի, 1990): Նույն տեղեկությոնը պատմահայրը կրկնում է նաև հաջորդ գլխի սկզբում. <<Իսկ զկնի այսպիսեաց իրաց յաջողութեանց դադարեալ Շամիրամայ աւուրս ինչ սակաւս ի դաշտին, որ անուանեալ կոչի յանուն Արայի...>> (Մովսես Խորենացի, 1990): Մ. Խորենացին, վկայակոչելով Երեմիա մարգարեին, Հայաստանն անվանում է <<Այրարատեան թագաւորութիւն>>. <<Եւ այս հաւաստի գոլոյ մերոյ թագաւորութեանն առ այնու ժամանակաւ>> (Բաբելոնի դեմ պատերազմելու – Հ.Ս.) (Մովսես Խորենացի, 1990):

Այրարատ նահանգի սահմանները Ղ. Ալիշանը համարում է ամենաընդարձակը: Վկայակոչելով Մ. Խորենացուն՝ նշում է, որ Արշակունիների ժամանակ այն եղել է թագավորների ոստանը. «...վասն որոյ յօրինակս ինչ Աշխարհագրութեան Խորենացոյն՝ վեշտասան գաւառք գրին Այրարատայ, զչորեսին կամ զհնգեսին համարելով միակ և սեփական Արարատեան երկիր, բնակութիւն հին Հայկազանց յԱրմենակայ և անդր, և ապա Ոստան եղեալ արշակունի թագաւորաց» (Ալիշան Ղ., 1890): Պատմահոր մոտ Այրարատ նահանգի կազմում նշված է միայն 16 գավառ: Ալիշանը թվարկում է 20-ը՝ Վերին Բասեն, Ստորին Բասեն, Հանունիք, Աբեղեանք, Գաբեղեանք, Արշարունիք կամ Երասխաձոր, Վանանդ, Շիրակ, Ճակատք, Արագածոտն, Նիգ, Վարաժնունիք, Կոտայք, Մազազ և Ոստան, Ուրծ և Արած, Շարուր, Մասեաց Ուն, Կոզովիտ,

Ծաղկոտն, Բագրևանդ: Իր աշխատության մեջ հեղինակը տվել է թվարկվածներից 19-ի հնագիտական, աշխարհագրական, պատմական նկարագիրը: 20-րդի՝ Շիրակի մասին, ինչպես վերևում նշվեց, առանձին աշխատություն է տպագրել 1881 թվականին:

Ղ. Ալիշանը մանրամասնորեն ներկայացնում է յուրաքանչյուր գավառի պատմաաշխարհագրական դիրքի, սահմանների, քաղաքների, գյուղերի, հայտնի բերդերի, եկեղեցիների նկարագիրը:

Վերին Բասենի գավառի աշխարհագրական դիրքի, սահմանների, Որդունիների նախարարական տոհմի մասին գավառի անվան ծագումնաբանության մասին խոսելիս, օրինակ, Ալիշանը նախ փաստեր է ներկայացնում օտարազգի պատմիչների երկերում հանդիպող տեղեկություններից, մասնավորապես քուրդ Շերեֆետտի և հույն Քսենոփոնի, ապա անցնելով հայկական աղբյուրներին՝ առաջնահերթ քաղաքներում է Խորենացուց. «Ի հովտին մեծի Բասենոյ կարգէ նահապետութիւն զՈրդունին անուանեալ որ ի գաւակացն Հայկայ» (Ալիշան Ղ., 1890): Խորենացին գրում է. <<...գոր հինքն Անփայտ և վերին Բասեան կոչէին. իսկ յետոյ վասն հատուածի Վզընդուր Բուլղարայ Վնդայ, բնակելոյ ի տեղիսն՝ յանուն նորա անուանեցաւ Վանանդ>> (Մովսէս Խորենացի, 1990): Համադրելով տվյալները՝ Ալիշանը եզրաբանում է. «Եւ նոյնինքն Բագ իցէ ազգապէտ տոհմին Բասենոյ. որ անուն՝ եթէ ի Փասիան փոխեցաւ ի Յունաց, չեն զարմանք թէ և այլ տառ մի անուան ի լծորդակիցն յեղուցու. և ահա նոյնանուն և նոյնատոհմն են Բագունիք կամ Բագեանք Հայկայ, Փասեանք Յունաց և Բասեանք յետին ժամանակաց մինչև ցայժմ» (Ալիշան Ղ., 1890):

Այրարատ աշխարհի մասին հիմնական պատմությունը Ղ. Ալիշանը սկսում է աստվածաշնչյան հայտնի ջրհեղեղի և Նոյի տապանի՝ Մասիսի կատարին կանգնելու մասին ավանդության վկայությամբ՝ համարելով այն մարդկության, մասնավորապես հայերի ծննդավայր. չմոռանանք, որ լինելով Մխիթարյան միաբանության կրոնական գաղափարների անմիջական կրողն ու ավանդույթների շարունակողը՝ պետք է որ այս կարծիքն ունենար: <<Մխիթարեան մտայնութիւնը

ոչ ոքի մօտ այդքան պայծառ է մարմնացած, որքան ճիղճ մարմնով, բայց շքեղ հոգիով այն աբբային վրայ, որուն անունն է Ալիշան»> (Օշական Յ., 1953): Հաջորդաբար ներկայացվող բոլոր փաստերն ու տեղեկությունները, իհարկե, ներկայացված են գիտական փաստերի հիման վրա:

Այրարատը եղել է հայ թագավորների բնակության հիմնական տեղավայրը, որի մասին վկայում է Մովսես Խորենացին: Տիգրանի որդի Արտավազդը, օրինակ, <<Ժառանգեցուցանէ զեղբարս իւր և զքորս ի գաւառս Աղւոյ ովտի և Առբերանոյ. միայն օրինադրէ ոչ կեալ յԱյրարատ ի բնակութիւնս արքայի>> (Մովսես Խորենացի, 1990): Պատմական Այրարատ աշխարհի տարածքում է գտնվում այսօրվա Հայաստանի մայրաքաղաքը՝ Երևանը. այդ տարածքում են գտնվել մեր պատմական մայրաքաղաքներից հինգը՝ Արմավիրը, Վաղարշապատը, Արտաշատը, Դվինը, Երվանդաշատը, որոնք կառուցվել են մայր գետի՝ Արաքսի ափերին: Բնակլիմայական պայմանների հետևանքով բազմիցս փոխվել է գետի հոսանքի ուղղությունը: Հայ արքաները ստիպված են եղել հաճախակի տեղափոխել մայրաքաղաքի տեղը՝ նոր քաղաքներ կառուցելով: Ալիշանը, վկայակոչելով Ե դարի պատմիչներին, հավաստում է այս տեղեկությամբ. «Վասն այսորիկ անմարթ և անդէպ է ըստ այժմեան ընթացից նորին և ըստ դրից մնացեալ հին քաղաքաց կամ աւերակաց նոցին՝ հաւաստել զբանս առաջին պատմչաց մերոց, զԱգաթանգեղեայ, զԿորեան, զԽորենացւոյ և զՂազարայ» (Ալիշան Ղ., 1890): Մ. Խորենացին երկու անգամ խոսել է գետի հոսանքի ուղղության փոփոխության մասին, մասնավորապես Երվանդաշատի մասին խոսելիս: <<Քանզի էր հեռացեալ զգետն Երասխ, և ի յերկարել ձմերայնոյն...>> (Մովսես Խորենացի, 1990): Քաղաքը կառուցելուց հետո գետի ճանապարհը այնքան է փոխվել, որ հին ուղին ցամաքել է, այլազգիներն էլ այդ տեղը կոչել են «Գուրու-Արագ (Յամաքեալ Երասխ)» (Ալիշան Ղ., 1890):

Երասխ և Մեծամոր գետերի միախառնման տեղում կառուցվել է Արտաշատը, որի մասին ևս, ըստ Ալիշանի, առաջինը գրել է Մ. Խորենացին, վերջինիս էլ երկրորդել է Թովմա Արծրունի պատմիչը: Ալիշանը, սակայն, այս տեղեկության մասին գրում է. «Անհաւատալի կամ ափշեցուցիչ իմն թուիցին բանքս յայժմեան

աշխարհացոյցս հայելով» (Ալիշան Ղ., 1890), սակայն, ինչպես լատին պատմիչներն են նշել, դժվար է եղել Երասխի վրա նույնիսկ կամուրջ կառուցելը, «գոր բնութիւն գծէ և ջնջէ յերեսս երկրի» (Ալիշան Ղ., 1890):

Ալիշանը մանրամասնորեն ներկայացնում է Այրարատի բնաշխարհը՝ լեռներ, դաշտեր, գետեր, լճեր: Ախուրյան գետի մասին տեղեկությունները հաղորդելիս Ալիշանը նշում է, որ Մովսես Խորենացին իր պատմության մեջ ևս պատմել է այդ մասին. «Բան մի պատմութեան Խորենացոյ թուեցուցանէ Սօր-մեծ կոչիլ նաև միջամասն գետոյն, քանզի ասէ վասն Վաղարշակայ, ելեալ 'ի Վանանդ, և աստի 'իջանէ 'ի Կողաց գաւառէ՝ գալ 'ի Վանանդ, և աստի իջանէ 'ի Դաշտն Մեծ. և անդ զափամբք Սօրին մեծի բանակի 'ի տեղոջ՝ ուր գետն Մեծ՝ 'ի ծովակէն Հիւսիսոյ սկիզբն առեալ՝ իջանէ և խառնի 'ի Սօրն մեծ» (Ալիշան Ղ., 1890):

«Սակայն, - գրում է Ալիշանը,- թուի ինձ Մեծ կամ Մեծագետ անուն՝ պատշաճագոյն վերին կիսոյ մասին այժմեանս Արփայ չայի, այսինքն ցխառնուրդս Կարուց գետոյն ընդ նա. քանզի ճոխագոյն օրինակ մի աշխարհագրութեան նորին Խորենացոյ, յիշելով զգաւառն «Վանանդ և Շիրակ (յարէ 'ի նոյն), յորոց եկեալ գետն Ախուրեան, հանդերձ Մեծագետովն, անցանելով յելից կուսէ Մարիկոպօլսի այսինքն Շիրակաշատի և Մբենոյ և Երուանդաշատ քաղաքի, իջանէ յԵրասխ» (Ալիշան Ղ., 1890):

Երկի հեղինակը հանգամանորեն տալիս է «Այրարատ» անվան բացատրությունը՝ բերելով օրինակներ հայ և օտարագրի բազմաթիվ պատմիչների մոտ հանդիպող տարբերակներից: Խորենացու մոտ այն հանդիպում է տարաբնույթ ձևաբանական ու քերականական դրսևորումներով, մակդիրներով. «Այրարատեան աշխարհ, Երկիր Յարարատեան, Երկիր Այրարատայ, Այրարատեան գաւառ, Այրարատ գաւառ, Գաւառ Այրարատու, յԱյրարատ, զԱյրարատ»: Տարբեր աղբյուրներում Այրարատ տեղանվան միջոցով աշխարհագրական տարբեր իրողություններ են նկարագրվել՝ մեկ որպես հայ ժողովրդի պատմական հայրենիք, մեկ որպես սրբազան լեռան՝ Մասիսի անուն, որպես գավառ, նահանգ, աշխարհ: Ղևոնդ Ալիշանը այս անվան ծագումնաբանության երկու տարբերակ է հավանական համարում՝ սուրբգրային և Արա Գեղեցիկի անվան հետ կապված,

սակայն շատ էլ չի խորանում այս հարցում, նշելով. «Բայց զի ոչ է խնդիր մեզ այժմ...» (Ալիշան Ղ., 1890):

«Հռչակագրյն և նշանավառ քան զյոլովս ի գաւառաց աշխարհիս մերոյն՝ Արագածոտն է, և ըստ բնութեանն հանգամանաց և ըստ քաղաքական տեսութեան. ըստ առաջնոյն՝ զերկրորդն ի բարձրութեան լեռանց Հայոց աշխարհիս ունելով և զլայնանիստն բնաւից, զեղեցիկ բարեմասնութեամբք յորդառատ ջուրց, զուարճագեղ բուսաբերութեան և յստակութեան օդոց» (Ալիշան Ղ., 1890): Այսպես է սկսում Արագածոտն գավառի մասին իր ուսումնասիրությունը Ղ. Ալիշանը, տալիս Արագածոտն տեղանվան բացատրությունը. խոսում Հայոց աշխարհի բարձրությամբ երկրորդ լեռան՝ քառագագաթ Արագած: Հայագետը երկում ներառել է լեռան մասին հայտնի ավանդությունները՝ կապված Գրիգոր Լուսավորչի հետ. խաչի տեսք ունեցող քառակատարությունը, հանրահայտ կանթեղի պատմությունը, վերջում ավելացնում, թե օտարները այն անվանում են Ալագեզ: Ներկայացվում է նաև Արագածի առանձնահատուկ բնաշխարհը. բնակլիմայական պայմանների, բարեբեր հողի, հանածոների՝ մասնավորաբար ծծումբի և քարերի, կենդանական և բուսական աշխարհի, հարևան բարձրավանդակների մասին և այլ տեղեկություններ, որոնք հաղորդվում են ամենայն մանրամասնությամբ: Մ. Խորենացին Արագածի մասին գրում է Հայկի սերունդներից Արամանյակի մասին պատմելիս. <<Յայսմ խորութեան դաշտի բնակեալ Արամանեկայ՝ շինէ զմասն ինչ ի հիւսիսոյ կողմանէ դաշտին, և զոտն լերինն ի նոյն կողմանէ, և զլեռնն անուանէ յանկագոյն յիւր անուն Արագած, և զկալուածսն՝ ոտն Արագածոյ>> (Մովսէս Խորենացի, 1990):

Եթե Այրարատ նահանգի յուրաքանչյուր գավառի մասին պատմությունը Ալիշանը ամփոփել է մեկ գլխի շրջանակներում՝ հիմնականում առանց ենթագլուխների, ապա Արագածոտնի մասին ԺԱ գլուխն ընդգրկող հատվածը ամենաընդարձակն է: Գավառի անվան, աշխարհագրական դիրքի, լեռների, գետերի, բուսական և կենդանական աշխարհի, պատմական նշանավոր անցքերի ու ավանդույթների մասին պատմելուց հետո Ալիշանն առանձին ենթագլուխներով անդրադառնում է Արագածոտնի տարածքում գտնվող նշանավոր բնակավայրերին,

որոնցից առաջինը հիշատակվում է Թալինը: Այն սահմանակից է Շիրակ գավառին, ունի բարձրլեռնային դիրք, արևմտյան կողմերում կան նաև դաշտավայրեր: Բնությունը այգեվետ է և բարեբույս, ինչն Ալիշանը կապում է Մաստարա գետի ջրերով ոռոգվելու հետ. ճիշտ է, շատ են նաև անմշակ, ամայի տարածությունները: Ալիշանը ներկայացնում է Թալինի տարածաշրջանում իրեն հայտնի գյուղերն ու ավանները. Ատիեամանը, որտեղ գտնվող եկեղեցին նմանեցնում է Էջմիածնի Հռիփսիմյան տաճարին, Աղաքիչիքը կամ Աճակձ-ին՝ որտեղ եղել է Սուրբ Գևորգ անունով եկեղեցի, Մեզարձրզ (մի տեղ էլ Մեզարձրզ) անունով գյուղը, որտեղի բնակիչները գաղթել են Ալաշկերտից՝ 1840-50-ական թվականներին, նորոգել երկու եկեղեցիները՝ մեկը Սուրբ Ամենափրկիչ, մյուսն էլ նախկինում Սուրբ Սարգիս, 19-րդ դարում Սուրբ Հովհաննես անուններով: Պուղուրու լեռան ստորոտին է գտնվում Փիրտիքեան սակավաբնակ գյուղը, Մեզարձրզի հարևանությամբ՝ Գիւլ կամ Ղուլ-տերվիշ և Գըրմըզլը կամ Խըրմըզլու գյուղերը: Վերջին գյուղը Կաղդուանից 1828-ին գաղթած բնակիչները կոչեցին Նոր Գըրմըզլը, եկեղեցին էլ՝ Սուրբ Աստվածածին: Ալեքսանդրապոլն ու Սարդարապատը միմյանց կապող ճանապարհին է գտնվում Մաստարա բարգավաճ ավանագյուղը, որտեղ գտնվող հին եկեղեցում առկա են պատմական արժեք ունեցող մի շարք արձանագրություններ: Ալիշանը հիշատակում է նաև մի շարք այլ գյուղեր ևս՝ Կեօզլի, Արալլի, Շեյխճաձի, Ըռինտ, Տատալու, Մեհրիպան կամ Միհրեվան, Ահակձի, Գըշպաչսըզ, Վերին և Ստորին Ագձագալե, Գարկագոնմազ, Եճչիլ, Պախչեձիկ, Գարագալե, Ագարակ: Մաստարայից 4 կամ 5 մղոն հեռու գտնվում է Թալին կամ Թալնոյ Ուրք անունով բնակավայրը: Ռուս-թուրքական պատերազմից հետո ¹ Ղարսից գաղթաց բնակիչները հաստատվել են այստեղից ոչ հեռու. այդ տարածքն էլ կոչվել է Նոր Թալին: Հին և Նոր Թալինների միջև եղել է Քերվանսերայ անունը կրող, բերդի նմանությամբ իջևանատունը, որն ունեցել է բազմաթիվ ընդարձակ սենյակներ, որտեղ հյուրընկալվել են հիմնականում օտարերկրացիները, որոնցից շատերը հետագայում մշտական բնակության վայր

¹ Ալիշանը թիվ չի նշում, գրում է վերջին, ենթադրում ենք՝ նկատի ունի 1877-1878 թթ. պատերազմը:

են դարձրել այն: Թալինի հարևանությամբ Ալիշանը նշում է Աշնակ բնակավայրը, հիշատակելով Սեբեոս պատմիչին, որն այն անվանել է «Արուճն Աշնակի»: Վերջում հեղինակը ցուցակագրում է Թալինի տարածքում իրեն հայտնի 21 գյուղերի անուններ, որոնք այս կամ այն պատճառով ամայացել են՝ վերջում բարեխղճաբար նշելով, թե անհրաժեշտ է ստուգաբանել և ճգրտել այդ տեղեկությունը:

Նույն մանրամասնությամբ Ղ. Ալիշանը ներկայացնում է Արագածոտն գավառի մյուս բնակավայրերի մասին տեղեկությունները՝ Արուճ կամ Թալիշ, Կոշ, Աղցք, Անբերդ (Ամբերդ), Բյուրական, Փարպի, Կարբի-Պասար, Քասաղ, Մուղնի, Աշտարակ, Օշական: Բացի տեսական նյութը, գրքում զետեղված են նաև տարատեսակ քարտեզներ, հատակագծեր, շենքերի ու ավանների համայնապատկերներ, վանքերի ու եկեղեցիների, տարբեր կառույցների, խաչքարերի, տվյալ տարածքում իր գործունեությամբ հայտնի անձանց նկարներ, որոնք ավելի են մեծացնում աշխատության արժեքը:

Պատմական Արագածոտնի գավառի կազմում եղած, այսօրվա Արմավիրի մարզի մի շարք բնակավայրերի (Վաղարշապատ, Էջմիածին, Սարգսրապատ և այլն) մասին ևս երկում առկա են բազմաթիվ տեղեկություններ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով կարող ենք ասել, որ Ղևոնդ Ալիշանն իր «Այրարատ. բնաշխարհի Հայաստանեայց» երկում, ներկայացնելով պատմական Հայաստանի Այրարատ նահանգի բոլոր գավառների, քաղաքների, ավանների ու գյուղերի պատմաշխարհագրական նկարագիրը, տարբեր հարցերի պարզաբանման ժամանակ օգտվել է պատմահայր Մովսես Խորենացու, մասնավորաբար նրա «Հայոց պատմություն» աշխատությունից՝ պարբերաբար մեջբերումներ անելով բնագրից: «Այրարատ. բնաշխարհի Հայաստանեայց» երկում գավառներին հատկացված ամենածավալուն հատվածը Ղևոնդ Ալիշանը նվիրել է Այրարատ նահանգի ամենամեծ գավառի՝ Արագածոտնի պատմաաշխարհագրական բնութագիրը ներկայացնելուն և առանձին ենթագլուխներում գրելով գավառի տարբեր բնակավայրերի մասին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ալիշան Դ. (1890), Այրարատ. բնաշխարհի Հայաստանեայց, Վենետիկ, Ս. Դազար, Մխիթարեան Մ. հրատ.:
2. Դոլուխանյան Ա. (2020), Նախաբան. Ղևոնդ Ալիշան, Հոգվածների ժողովածու՝ նվիրված Ղևոնդ Ալիշանի ծննդյան 200-ամյա հոբելյանին, Երևան, Լուսակն հրատ.:
3. Խալաթյան Գ. (1988), Հ. Ալիշան և իւր նոր երկասիրությունը, Արձագանք շաբաթաթերթ, Թիֆլիս, 22 մայիսի, № 19, Արձագանք հրատ.
[https://tert.nla.am/archive/NLA%20TERT/Ardzagank/1888/1888\(19\)_ocr.pdf](https://tert.nla.am/archive/NLA%20TERT/Ardzagank/1888/1888(19)_ocr.pdf) :
4. Մովսէս Խորենացի (1990), Պատմութիւն Հայոց, Քննական բնագիրը և ներածությունը Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, Նմանահանություն 1913 թ.-ի Թիֆլիսի հրատարակության, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ.:
5. Մովսէս Խորենացի (1990), Հայոց պատմություն, ներած. և ծանոթ. Ստ. Մալխասյանի, Երևան, Հայաստան հրատ.:
6. Շտիկյան Ս. (1981), Առաջաբան. Ալիշան Դ., Երկեր (Բնագիրը, և ծանոթագրությունները. Ս. Շտիկյանի), Երևան, Սովետ. գրող հրատ.:
7. Օշական Յ. (1953), Համապատկեր արեւմտահայ գրականութեան, հատ. 2, Երուսաղեմ, Սրբոց Հակոբեանց հրատ.:

REFERENCES

1. Alishan Gh. (1890), Ayrarat. bnashxarh Hayastaneayc /Ayrarat. Nature of Armenia/, Venice - St. Ghazar, Mkhitarian M. ed.
2. Dolukhanyan A. (2020), Naxaban. Gh&ond Alishan, Hodvac'neri jhoghovac'ow՝ nvirvac' Gh&ond Alishani c'ndyan 200-amy a hobelyanin /Preface, Ghevond Alishan. A collection of articles dedicated to the 200th anniversary of Ghevond Alishan's birth/, Yerevan, Lusakn ed.
3. Khalatyants G. (1988), H. Alishan & iwr nor erkasirowt'yowny' /F. Alishan and his new work/, Ardzagank weekly, Tiflis, May 22, № 19, Ardzagank ed.
[https://tert.nla.am/archive/NLA%20TERT/Ardzagank/1888/1888\(19\)_ocr.pdf](https://tert.nla.am/archive/NLA%20TERT/Ardzagank/1888/1888(19)_ocr.pdf) :

4. **Movses Khorenatsi (1990)**, Patmowt'iwn Hayoc, Qnnakan bnagiry' & nerac'owt'yowny' M. Abeghyani & S. Harowt'yownyani /History of Armenian, Examining original and introduction by M. Abeghyani and S. Harutyunyan/, Imitation of the Tiflis edition of 1913, Yerevan, Armenian SSR GA ed, 560 p..
5. **Movses Khorenatsi (1990)**, Hayoc patmowt'yown/ History of Armenian/, intro. and familiar. St. Malkhasyan, Yerevan, Armenia ed., 361 p..
6. **Shtikyan S. (1981)**, Ar'ajaban. Alishan Gh., Erker /Foreword. Alishan Gh. Yerker/ (Original, and notes: S. Shtikyan), Yerevan, Soviet. writer ed., 400 p..
7. **Oshakan Y. (1953)**, Hamapatker arewmtahay grakanowt'ean /Overview of Western Armenian Literature/, vol. 2, Jerusalem, Srbots Hakobeants ed., 448 p..

Оганнес Саргсян

Работа Гевонда Алишана „Айрарат. природа Армении”,

Арагацотнская область и Мовсес Хоренаци

Заключение

***Ключевые слова и выражения:** Мовсес Хоренаци, Гевонд Алишан, Айраратская провинция, Арагацотнская область, источники, столицы, история, география.*

«Айрарат. природа Армении» – один из шедевров великого произведения, задуманного Гевондом Алишаном. Отец Алишан поставил перед собой цель подвергнуть сведения обо всех 15 провинциях Исторической Армении историко-географической экспертизе, написать труды, изложив их по отдельности в 20-22 больших томах. В 1855 г. опубликованном труде «Топография армян» он представил провинции исторической Армении, по существу дал соответствующую научно-географическую характеристику. В 1881 г. на стол читателя был положен труд, посвященный одной из провинций Айраратской губернии, Шираку, в 1885 г. – «Сисуан», посвященный Киликийской Армении. «Айрарат» был напечатан в Венеции в 1890 году в типографии Св. Лазаря. В книге Гевонд Алишана представлено историко-географическое описание всех провинций, городов, поселков и сел исторической Айраратской губернии Армении с использованием

различных источников. Среди них видное место занимает Отец армянской историографии Мовсес Хоренаци, особенно его труд «История Армении», к которому автор обращался при разъяснении различных вопросов. В этой статье мы рассмотрели книгу «Айрарат.. природа Армении». Наша задача представить Мовсеса Хоренаци в упомянутом труде, отделить от комплексного исследования, проведенного Алишаном, информацию, касающуюся Арагацотна, самого крупного областа в Айраратском губернии, особенно тех населенных пунктов, которые до сих пор входят в состав Арагацотнского областа по административно-территориальному деления, и показать, насколько великое наследие, оставленное Хоренаци для сочинения этой книги неутомимым арменоведом XIIIIV века.

Hovhannes Sargsyan

The work „Ayrarat. nature of Armenia” by Ghevond Alishan,

Aragatsotn region and Movses Khorenatsi

Conclusion

Key words and expressions: Movses Khorenatci, Ghevond Alishan, Ayrarat province, Aragatsotn region, sources, capitals, history, geography.

“Ayrarat. nature of Armenia” is one of the masterpieces of the great work conceived by Ghevond Alishan. Father Alishan set himself the goal of subjecting information about all 15 provinces of Historical Armenia to historical and geographical expertise, writing works, presenting them separately in 20-22 large volumes. In 1855, in the published work “Topography of the Armenians”, he presented the provinces of historical Armenia, essentially gave the corresponding scientific and geographical characteristics. In 1881, a work dedicated to one of the provinces of the Ayrarat province, Shirak, was placed on the reader's desk, in 1885 - "Sisuan", dedicated to Cilician Armenia. "Ayrarat" was printed in Venice in 1890 in the printing house of St. Lazarus. Ghevond Alishan's book presents a historical and geographical description of all the provinces, cities, towns and villages of the historical Ayrarat province of Armenia using various sources. Among them, a prominent place is occupied by the Father of Armenian historiography, Movses

Khorenatsi, especially his work “History of Armenian”, to which the author turned when explaining various issues. In this article, we reviewed the book "Ayrarat.. the nature of Armenia." Our task is to present Movses Khorenatsi in the mentioned work, to separate from the comprehensive study conducted by Alishan, information regarding Aragatsotn, the largest region in the Ayrarat province, especially those settlements that are still part of the Aragatsotn region according to the administrative-territorial division, and to show how great is the legacy left by Khorenatsi for the writing of this book by the tireless Armenologist of the 19th century.

Հովհաննես Մարգարյան – Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասպիրանտ: Գիտական հետաքրքրությունները՝ հայ հին և միջնադարյան, նոր շրջանի գրականություն: Հեղինակ է շուրջ քսան հոդվածի: sargsyanhov79@gmail.com.

Оганнес Саргсян - Аспирант кафедры древней и средневековой армянской литературы и преподавания ее методики в АГПУ им. Х. Абовяна. Сфера научных интересов: Древнеармянская и средневековая, новая армянская литература.: Автор около двух десятков статей. sargsyanhov79@gmail.com.

Hovhannes Sargsyan - Phd student of the Chair of Ancient and Medieval Armenian Literature and Teaching Its Methodology at the Kh.. Abovyan ASPU. Scientific interests: Ancient Armenian, medieval and new literature. sargsyanhov79@gmail.com.

Խմբագրություն է ուղարկվել 24.02.2024թ.

Հանձնարարվել է գրախոսության 01.03.2024թ.

Հրապարակման է ներկայացվել 05.06.2024թ.